ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2022 թվականի №---Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի №393Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի նոյեմբերի 3-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մասնակի մերժման հիմքերը ընդունելու մասին» №393Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Հանձնաժողովն ընդունել է «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տելեկոմ Արմենիա) կողմից «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել Տելեկոմ Արմենիային մերժել դիմումը՝ դիմումով հայցվող այն խողովակաշարերի մասով, որոնք Տելեկոմ Արմենիան նախատեսում է օգտագործել դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար,
2) Որոշմամբ նշված՝ խնդրո առարկա խողովակաշարերի հատվածները ներառող՝ Տելեկոմ Արմենիայի օպտիկամանրաթելային ցանցի զարգացման աշխատանքների ծրագիր (գործողությունների ժամանակացույց) ներկայացնելու վերաբերյալ Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 4-ի №ԱՍ/34.2-Մ2-10/3725-2021 գրության համաձայն՝ Տելեկոմ Արմենիան 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №1445/21-11

գրությամբ ներկայացրել է օպտիկամանրաթելային ցանցի կառուցման ժամանակացույց (այսուհետ՝ ժամանակացույց)՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների,

3) Ընկերությունը 2021 թվականի նոյեմբերի 23-ի №MH/L210854/1.0/RY գրությամբ միջնորդել է Հանձնաժողովին վերանայել Որոշումը՝ որպես հիմնավորում նշելով հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության հարցի վերաբերյալ Տելեկոմ Արմենիայի կողմից Ընկերությանը և Հանձնաժողովին տրամադրված տեղեկությունների հավաստիությունն ու լիարժեքությունը ստուգելու նպատակով Ընկերության խնդրո առարկա դիմումի մեջ նշված խողովակների ընտրանքային հատվածային տեղազննումների իրականացման անհրաժեշտությունը, որի արդյունքներով հնարավոր կլինի ձեռք բերել առավել լիարժեք տեղեկություններ Տելեկոմ Արմենիային պատկանող հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վերաբերյալ: Ուստի, Ընկերությունը խնդրել է կատարել տեղազննումներ և դրանց արդյունքների հիման վրա վերանայել Որոշումը,

4) ի պատասխան Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 29-ի №ՍՇ/34.2-Մ2-10/4066-2021 գրության՝ Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №MH/L210931/1.0/RY գրությամբ նշել է Ընկերության կողմից Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումով հայցվող խնդրո առարկա խողովակաշարի տեղազննման համար նախընտրելի հատվածներն ու տրամադրել տեղազննման աշխատանքներում ներգրավելու նպատակով Ընկերության համապատասխան մասնագետների տվյալները,

5) ի պատասխան Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 29-ի №ՍՇ/34.2-Մ2-10/4066-2021 գրության Տելեկոմ Արմենիան 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №1446/21-11 գրությամբ տրամադրել է տեղազննման աշխատանքներում ներգրավելու նպատակով համապատասխան մասնագետների տվյալները,

6) Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի №1041-ԳՔ հրամանի համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-24-ն Ընկերության կողմից հայցվող՝ Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարի՝ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի №13 հասցեից մինչև Բյուզանդի փողոց №1, Ահարոնյան փողոցի №12 հասցեից մինչև Դավիթ Անհաղթ

փողոցի №11 և Կոմիտասի պողոտա №35/2 հասցեից մինչև Կոմիտասի պողոտա №51 հասցեներում իրականացվել են տեղազննման աշխատանքներ՝ Հանձնաժողովի, Ընկերության և Տելեկոմ Արմենիայի համապատասխան մասնագետների մասնակցությամբ,

7) իրականացված տեղազննման ընթացքում ի թիվս Տելեկոմ Արմենիայի հանրային համակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող դիտահորերում առկա խողովակների զբաղվածության (ազատ թողունակության առկայության) ծավալների, արձանագրվել է նաև, որ տվյալ դիտահորերում առկա խողովակների քանակը չի գերազանցում 10-ը: Տեղազննման արդյունքերով կազմվել է հաշվետվություն (Ընկերության և Տելեկոմ Արմենիայի մասնագետների հետ աշխատանքային կարգով համաձայնեցված)՝ պատճենը Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 11-ի №ՍՇ/34.2-Մ2-10/446-2022 գրությամբ ուղարկվել է Ընկերությանն ու Տելեկոմ Արմենիային,

8) ելնելով տեղազննման արդյունքներից՝ Հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 27-ի №ՍՇ/34.2-Մ2-10/227-2022 գրությամբ Տելեկոմ Արմենիայից պահանջվել է ներկայացնել տեղեկատվություն (հիմնավորումներով)՝ ժամանակացույցով նախատեսված աշխատանքների կատարման մասին, նկատի ունենալով, որ Արաբկիր վարչական շրջանում նոր սերնդի ցանցի կառուցման աշխատանքները պետք է ավարտվեին 2021 թվականի ընթացքում,

9) Տելեկոմ Արմենիան 2022 թվականի փետրվարի 3-ի №156/22-11 գրությամբ ներկայացրել է ժամանակացույցով նախատեսված աշխատանքների կատարման մասին տեղեկատվություն որի համաձայն՝ Արաբկիր վարչական շրջանում խողովակաշարի վթարավերականգնողական աշխատանքների ծավալով պայմանավորված դրանց կատարման համար պահանջվել է առավել երկար ժամանակ և նշված վարչական շրջանում իրականացվել է տվյալ աշխատանքների ծավալի 50 տոկոսը: Բացի այդ, ժամանակացույցի կազմման ընթացքում Տելեկոմ Արմենիան չէր նախատեսել Երևանի քաղաքապետարանի կողմից ձմռան ամիսներին շինարարական թույլտվությունների տրամադրման դադարեցման հանգամանքը, արդյունքում Տելեկոմ Արմենիան ներկայացրել է ժամանակացույցի փոփոխված տարբերակը, որի համաձայն՝ Ընկերության խնդրո առարկա դիմումով հայցվող՝ Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերն ընդգրկող Երևան քաղաքի վարչական շրջաններում Տելեկոմ Արմենիայի հանրային

էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման՝ օպտիկամանրաթելային ցանցի կառուցման աշխատանքներն ավատվելու են 2023 թվականին,

10) Որոշման վերանայման շրջանակում ժամանակացույցով նախատեսված՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի զարգացման (օպտիկամանրաթելային ցանցի կառուցման) աշխատանքների կատարման ուսումնասիրության նպատակով անհրաժեշտություն է առաջացել տվյալ վարչական շրջանում իրականացնելու Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերի համապատասխան հատվածների, այդ թվում՝ Ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա խողովակաշարի տվյալ վարչական շրջանում գտնվող հատվածների տեղազննման աշխատանքներ, ինչի վերաբերյալ Ընկերությունն ու Տելեկոմ Արմենիան տեղեկացվել են Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 31-ի №ՍՇ/34.2-Մ2-10/974-2022 և №ՍՇ/34.2-Մ2-10/974-2022 գրություններով և ի պատասխան (Ընկերության 2022 թվականի ապրիլի 4-ի №MH/L220257/1.0/RY և Տելեկոմ Արմենիայի 2022 թվականի ապրիլի 5-ի N364/22-11 գրություններով) տրամադրել տեղազննման աշխատանքներում ներգրավելու նպատակով համապատասխան մասնագետների տվյալները,

11) Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի ապրիլի 8-ի №237-ԳՔ հրամանի համաձայն՝ 2022 թվականի ապրիլի 13-19-ը Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերի, ներառյալ՝ Ընկերության կողմից հայցվող՝ Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարի՝ Երևան քաղաքի Դավթաշենի 4-րդ թաղամաս 17/10 հասցեից մինչև Դավթաշենի 3-րդ թաղամաս 23/1 հասցեում և Հայաստանի Հանրապետության կառավարության շենք 1 հասցեից Դավթաշենի 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյան 109/8 (Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն) և Դավթաշենի 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյան 109/8 հասցեից Տիգրան Մեծի 4 հասցեների Դավթաշեն համայնքով անցնող հատվածներում իրականացվել են տեղազննման աշխատանքներ՝ Հանձնաժողովի, Ընկերության և Տելեկոմ Արմենիայի համապատասխան մասնագետների մասնակցությամբ,

12) Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող Ընկերության կողմից հայցվող խողովակաշարերի հատվածների տեղազննման ընթացքում ի թիվս Տելեկոմ

Արմենիայի հանրային համակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող դիտահորերում առկա խողովակների զբաղվածության (ազատ թողունակության առկայության) ծավալների, արձանագրվել է նաև, որ տվյալ դիտահորերում առկա խողովակների քանակը չի գերազանցում 10-ը (բացառությամբ №144 դիտահորի, որի 6-12-րդ խողովակները վնասված են և անանցանելի), ընդ որում, նշված դիտահորերից՝ №65/8, №65/7, №65/5, №65/4, №65/3 և №65/2 դիտահորերի միջև ընկած բոլոր խողովակները վնասված են: Բացի այդ, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի զարգացման (օպտիկամանրաթելային ցանցի կառուցման) աշխատանքների կատարման ուսումնասիրության նպատակով տվյալ վարչական շրջանի մի շարք այլ խողովակաշարերի տեղազննման իրականացման արդյունքում պարզվել է, որ №65/1, №62, №54, №92, №144, №114, №118, №119, №120 և №122/1 դիտահորերում առկա են նոր սերնդի ցանցի կառուցման համար նախատեսված օպտիկամանրաթելային մալուխներ (Microduct տեսակի) և տվյալ դիտահորերով անցնող խողովակներն ամբողջությամբ զբաղված չեն՝ Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 1-ին կետի համաձայն՝ առկա են խողովակների ազատ թողունակություններ, իսկ №65/8, №65/7, №65/5, №65/4, №65/3 և №65/2 դիտահորերում նոր սերնդի ցանցի կառուցման համար նախատեսված Microduct տեսակի օպտիկամանրաթելային մալուխներ (Microduct տեսակի) առկա չեն: Տեղազննման արդյունքներով կազմվել է հաշվետվություն (Ընկերության և Տելեկոմ Արմենիայի մասնագետների հետ աշխատանքային կարգով համաձայնեցված), որի պատճենը Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 4-ի №ՍՇ/34.2-Մ2-2/1381-2022 և №ՍՇ/34.2-Մ2-2/1382-2022 գրություններով ուղարկվել է Ընկերությանն ու Տելեկոմ Արմենիային,

13) Ելնելով տեղազննման արդյունքներից՝ Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 4-ի №ՍՇ/34.2-Մ2-2/1382-2022 գրությամբ Տելեկոմ Արմենիայից պահանջվել է ներկայացնել պարզաբանումներ (հիմնավորումներով)՝ այդ թվում՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում ժամանակացույցով նախատեսված աշխատանքների

կատարման արդյունքների, նոր սերնդի ցանցի կառուցման համար նախատեսված օպտիկամանրաթելային մալուխներ (Microduct տեսակի) պարունակող դիտահորերով անցնող խողովակներն ամբողջությամբ զբաղված չլինելու վերաբերյալ,

14) Տելեկոմ Արմենիան 2022 թվականի մայիսի 10-ի №518/22-11, մայիսի 11-ի №540/22-11 և մայիսի 16-ի №559/22-11 գրություններով հայտնել է, որ նոր սերնդի օպտիկամանրաթելային ցանցը կառուցվում է ըստ առաջնահերթությունների (արդեն բնակեցված բազմաբնակարան շենքեր, նորակառույց չբնակեցված կամ կառուցվող բազմաբնակարան շենքեր, առանձնատների թաղամասեր) և Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 1-4-րդ թաղամասերի բազմաբնակարան շենքերում նոր սերնդի օպտիկամանրաթելային (FTTH) ցանցի կառուցման աշխատանքներն ավարտվել են 2021 թվականի դեկտեմբերին, որի արդյունքում ժամանակացույցով նախատեսված՝ տվյալ վարչական շրջանի 10625 բնակարաններում օպտիկամանրաթելային ծածկույթն ապահովված է: Նույն ժամկետում ավարտվել է նաև ժամանակացույցով նախատեսված Արաբկիր վարչական շրջանում ցանցի կառուցման աշխատանքների ծավալի 50 տոկոսը, որի արդյունքում օպտիկամանրաթելային ծածկույթով ապահովված են տվյալ վարչական շրջանի 14337 բնակարաններ: Տեղազննման արդյունքում արձանագրված՝ դիտահորերը միացնող վնասված (անանցանելի) խողովակաշարերի հատվածներում մալուխների անցկացման անհրաժեշտություն կառաջանա Դավթաշեն վարչական շրջանի առանձնատների թաղամասերում և նորակառույց շենքերում ցանցի ծածկույթի ընդլայնման, ավտոմատ հեռախոսակայանները կապող մալուխային օղակի (հիմնական և երկու ռեզերվային ուղություններով, որը հնարավորություն կտա հետագայում Երևան քաղաքում ցանկացած երկու հասցեների միջև տրամադրել բարձր հուսալիության ուղիղ միացնող օպտիկամանրաթելային մութ թելիկի ծառայություն) և Զովունի համայնքում ցանցի կառուցման ընթացքում, որի համար տվյալ խողովակաշարերի անցանելիությունը վերականգնելու նպատակով պետք է իրականացվեն վթարավերականգնողական աշխատանքներ, որից հետո, երբ տվյալ խողովակաշարերով կանցկացվեն վերոնշյալ աշխատանքների իրականացման համար նախատեսված մալուխները՝ այդ հատվածների, ինչպես նաև նոր սերնդի ցանցի մալուխներով դեռևս ամբողջովին չզբաղեցված խնդրո առարկա խողովակների թողունակությունն ամբողջովին կսպառվի մինչև 2024 թվականը,

15) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, որը տուժել է կարգավորողի որոշման արդյունքում, իրավասու է այդ որոշման հրապարակումից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, միջնորդել կարգավորողին, որպեսզի վերջինս վերանայի այդ որոշումը: Եթե նույն հոդվածի առաջին մասի համաձայն ներկայացվում է միջնորդություն, ապա կարգավորողը կարող է կարգադրել, որպեսզի խնդրո առարկա որոշումը գործողության մեջ չմտնի մինչև խնդիրը վերանայելը և այդ մասին լրացուցիչ որոշում կայացնելը և պարտավոր է վերանայման միջնորդության ներկայացումից հետո՝ 180 օրվա ընթացքում, հաստատել, փոփոխել կամ ուժը կորցրած ճանաչել այդ որոշումը կամ դրա ցանկացած մասը: Եթե նույն հոդվածի երկրորդ մասի 1-ին կետի համաձայն կարգադրություն չի արձակվում, ապա որոշումը շարունակում է գործել,

16) Հանձնաժողովը, Որոշման վերանայման շրջանակում հաստատված է համարում հետևյալը.

ա. Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գերիշխող օպերատորը իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Հանձնաժողովին ապացուցի, որ խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում, իսկ Կանոնների 19-րդ կետի համաձայն՝ եթե դիմումը մերժելու հիմք է հանդիսանում Կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանը, ապա գերիշխող օպերատորը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել հիմքեր առ այն, որ օպերատորի կողմից ենթակառուցվածքի պահանջված հատվածում ազատ թողունակությունը սպառված է կամ կսպառվի իր կարիքների համար դիմումի ամսաթվից հետո 3 տարվա ընթացքում,
- Կանոնների 20-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով գերիշխող օպերատորի կողմից ներկայացված դիմումը մերժելու պատճառ հանդիսացող ապացույցները, հաշվի առնելով սեփական նախաձեռնությամբ կատարված ուսումնասիրությունները, 20 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է հետևյալ որոշումներից մեկը. ընդունել գերիշխող օպերատորի կողմից ներկայացված՝ դիմումը մերժելու բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել գերիշխող օպերատորին՝ մերժել դիմումը կամ մերժել Գերիշխող օպերատորի կողմից ներկայացված՝ դիմումը մերժելու բավարար հիմքերի առկայությունը և սահմանել տեխնիկական պայմանների տրամադրման և պայմանագրի կնքման նոր ժամկետ,

բ. Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումների պահանջներին համապատասխան և այն վերանայելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Որոշման 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովն ընդունել է Տելեկոմ Արմենիայի կողմից Ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել Տելեկոմ Արմենիային մերժել դիմումը՝ դիմումով հայցվող այն խողովակաշարերի մասով, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար: Նշվածի համար հիմք են հանդիսացել Տելեկոմ Արմենիայի ներկայացրած՝ Ընկերության դիմումը մերժելու պատճառ հանդիսացող հիմնավորումները դիմումով հայցվող խնդրո առարկա այն խողովակաշարերի մասով, որոնք Տելեկոմ Արմենիան նախատեսում է օգտագործել տվյալ դիմումն ստանալուց հետո 3 տարվա ընթացքում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար (մինչև 10 խողովակներ ունեցող մագիստրալային խողովակաշարերը Տելեկոմ Արմենիան պլանավորում է օգտագործել 3 տարիների ընթացքում իր օպտիկամանրաթելային ցանցի ընդլայնման և նոր սերնդի ցանցի կառուցման նպատակով, իսկ այն հատվածները, որոնք Տելեկոմ Արմենիան պատրաստ է տրամադրել վարձակալության՝ առկա են 10 և ավելի ազատ խողովակներ): Տելեկոմ Արմենիայի ներկայացրած ժամանակացույցի համաձայն՝ Ընկերության խնդրո առարկա դիմումով հայցվող՝ Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերն ընդգրկող Երևան քաղաքի վարչական շրջաններում Տելեկոմ Արմենիայի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման՝ օպտիկամանրաթելային ցանցի կառուցման աշխատանքներն ավարտվելու են 2023 թվականին, այսինքն՝ Ընկերության խնդրո առարկա դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում: Տելեկոմ Արմենիայի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարի (այդ թվում՝ Ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա խողովակաշարի տեղազննման համար վերջինիս կողմից նախընտրելի հատվածների) տեղազննումների արդյունքներով արձանագրվել է, որ Ընկերության կողմից հայցվող՝ Տելեկոմ Արմենիայի հանրային համակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող դիտահորերում առկա խողովակների քանակը չի գերազանցել 10-ը (բացառությամբ Դավթաշեն վարչական շրջանում գտնվող №144 դիտահորի, որի 6-12-րդ խողովակներն սակայն

վնասված են և անանցանելի)՝ ներառյալ վնասված խողովակներ ունեցող Դավթաշեն վարչական շրջանում գտնվող դիտահորերում: Բացի այդ, ժամանակացույցի համաձայն՝ Տելեկոմ Արմենիայի կողմից Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում իրականացվել և 2021 թվականի դեկտեմբերին ավարտվել են նոր սերնդի օպտիկամանրաթելային (FTTH) ցանցի կառուցման աշխատանքները (անցկացվել են նոր սերնդի ցանցի կառուցման համար նախատեսված օպտիկամանրաթելային մալուխներ (Microduct տեսակի)), ընդ որում, նույն ժամկետում Տելեկոմ Արմենիան ավարտել է նաև ժամանակացույցով 2021 թվականի համար նախատեսված՝ Արաբկիր վարչական շրջանում ցանցի կառուցման աշխատանքները: Դավթաշեն վարչական շրջանում առկա դիտահորերը միացնող վնասված (անանցանելի) խողովակաշարերի հատվածներում անցանելիությունը վերականգնելու նպատակով Տելեկոմ Արմենիան իրականացնելու է վթարավերականգնողական աշխատանքներ՝ Դավթաշեն վարչական շրջանի առանձնատների թաղամասերում և նորակառույց շենքերում ցանցի ծածկույթի ընդլայնման, ավտոմատ հեռախոսակայանները կապող մալուխային օղակի և Զովունի համայնքում ցանցի կառուցման նպատակով, որից հետո, երբ տվյալ խողովակաշարերով կանցկացվեն վերոնշյալ աշխատանքների իրականացման համար նախատեսված մալուխները՝ այդ հատվածների, ինչպես նաև նոր սերնդի ցանցի մալուխներով դեռևս ամբողջովին չզբաղեցված խնդրո առարկա խողովակների թողունակությունն ամբողջովին կսպառվի մինչև 2024 թվականը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածը Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել Որոշումը:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2022թ.